ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի կողմից 2020 թվականի 3-րդ եռամսյակում 13-ՏՎևՎ-2020-ՄԷԿ ծածկագրով իրականացված «Սևան ՀԷԿ-ի մարդատար վերելակի և հորանի մետաղական կոնստրուկցիայի վերականգնման (նախագծի կատարում) աշխատանքների ձեռքբերման» բաց առաջարկների հարցման մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ 2021

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-իգնումների առանձին գործարքների մոնիթորինգի արդյունքները

<u>Մոնիթորինգի իրականացման հիմքը</u>՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2014 թվականի հունիսի 25-ի №207Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում №1) հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի կարգ:

<u>Մոնիթորինգի օբյեկտը</u>՝ «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն):

<u>Մոնիթորինգի առարկան</u>՝ Ընկերության կողմից 2020 թվականի 3-րդ եռամսյակի ընթացքում իրականացված գնումների առանձին գործարքներ:

<u>Մոնիթորինգի նպատակը</u>՝ Ընկերության կողմից կատարված գնումների առանձին գործարքների արդյունավետության ուսումնասիրություն և համապատասխանության գնահատում Հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի №391Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում №2) սահմանված լրացուցիչ պահանջներին:

<u>Մոնիթորինգի իրականացման ժամկետը</u>՝ 2020 թվականի դեկտեմբերի 7-ից մինչև 2021 թվականի հունվարի 29-ը:

<u>Մոնիթորինգի մեթոդաբանությունը</u>՝ Ընկերության գնումների առանձին գործարքների մոնիթորինգն իրականացվել է ընկերության կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրության, գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրության, մրցութային փաստաթղթերի և մատակարարի ընտրության ընթացակարգի մոնիթորինգի միջոցով:

«Սևան ՀԷԿ-ի մարդատար վերելակի և հորանի մետաղական կոնստրուկցիայի վերականգնման (նախագծի կատարման) աշխատանքների ձեռքբերման» բաց առաջարկների հարցում

Ընկերության 2020 թվականի գնումների պլանի հիման վրա, գլխավոր տնօրենի 2020 թվականի օգոստոսի 14-ի №416 հրամանի համաձայն՝ Ընկերությունը կազմակերպել և անցկացրել է բաց առաջարկների հարցում «Սևան ՀԷԿ-ի մարդատար վերելակի և հորանի մետաղական կոնստրուկցիայի վերականգնման (նախագծի կատարում) աշխատանքների ձեռքբերման» պայմանագրի կնքման իրավունքով, հայտերի ներկայացման վերջնաժամկետ սահմանելով 2020 թվականի օգոստոսի 21-ը:

Մրցույթի անցկացման նպատակով 2020 թվականի օգոստոսի 14-ին Ընկերությունն իր պաշտոնական կայքում և «Գնումների մասին» օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով գործող ինտերնետային կայքում՝ www.procurement.am (Տեղեկագիր), հրապարակել է բաց առաջարկների հարցման մասին հայտարարությունը և հրավերը:

Ընկերության 13-ՏՎևՎ-2020-ՄԷԿ ծածկագրով իրականացված «Սևան ՀԷԿ-ի մարդատար վերելակի և հորանի մետաղական կոնստրուկցիայի վերականգնման (նախագծի կատարում) աշխատանքների ձեռքբերման» բաց միափուլ մրցույթի հայտարարումից հետո հայտ է ներկայացրել մեկ մասնակից՝ «Նորտեքս Էնջինիրինգ» ՓԲԸ-ն:

Ընկերության կողմից ներկայացված հայտը մրցութային հանձնաժողովի կողմից համարվել է ըստ էության մրցութային պայմաններին բավարար: Ներկայացված գնային առաջարկը բերված է ստորև.

№	Ընկերության անվանում	Ներկայացված գնային առաջարկները մլն դրամ՝ առանց ԱԱՀ
	1	2
1	«Նորտեքս Էնջինիրինգ» ՓԲԸ	121,2

Համաձայն Ընկերության 24.08.2020թ.մրցութային հայտերի գնահատման և առաջարկի հարցման հաղթողի ընտրության վերաբերյալ ԳՀ նիստի №037 արձանագրության՝ հաղթող է ճանաչվել «Նորտեքս Էնջինիրինգ» ՓԲԸ-ն՝ հայտի գինը 121,2 մլն դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Հաղթողի ընտրությունը կատարվել է հաղթողի ընտրության գնահատման աղյուսակի հիման վրա՝ չորս չափանիշներով՝ ընդհանուր արժեք, տեխնիկական համապատասխանություն, մասնակցի հուսալիություն, վճարման պայմաններ:

Ընկերության և «Նորտեքս Էնջինիրինգ» ՓԲԸ-ի միջև 2020 թվականի օգոստոսի 28-ին կնքվել է «Սևան ՀԷԿ-ի մարդատար վերելակի և հորանի մետաղական կոնստրուկցիայի վերականգնման (նախագծի կատարում) աշխատանքների կատարման» №ՀԳ-026 պայմանագիր, ըստ որի Ընկերությունը աշխատանքների կատարման համար վճարում է 121,2 մլն դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել մինչև 30.12.2020 թվականը:

Ընկերության 13-ՏՎևՎ-2020-ՄԷԿ ծածկագրով իրականացված «Սևան ՀԷԿ-ի մարդատար վերելակի և հորանի մետաղական կոնստրուկցիայի վերականգնման (նախագծի կատարում) աշխատանքների ձեռքբերման» բաց առաջարկների հարցման փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հարկ է փաստել, որ.

1. Ընկերությունն իր պաշտոնական կայքում և Տեղեկագրում 2020 թվականի օգոստոսի 14-ին հրապարակել է բաց առաջարկների հարցման մասին հայտարարությունը և հրավերը: Կնքված պայմանագրի մասին հայտարարությունը ևս հրապարակված է Ընկերության պաշտոնական կայքում և Տեղեկագրում:
2. Ընկերությունը Սևան ՀԷԿ-ի մարդատար վերելակի և հորանի մետաղական կոնստրուկցիայի վերականգնման աշխատանքների գնումն իրականացրել է առանձին բնութագրեր ունեցող գնման այլ առարկաների հետ՝ որպես առանձին չափաբաժին: Ընդ որում այդ չափաբաժնին տրվել է առանձին ծածկագիր, իսկ դրանով իրականացվող մրցույթին՝ ոչ: Այդ առումով անհրաժեշտ է չափաբաժիններով իրականացվող բոլոր մրցութերին տալ

ծածկագրեր և անվանումներ ու կատարված գնումների մասին սահմանված կարգով հաշվետվություն ներկայացնել Հանձնաժողով: Անհրաժեշտ է նաև Ընկերության գնումների նկատմամբ սահմանված պահանջներին համապատասխան կարգով Ընկերության գնումների պլանում ներառել մրցույթով իրականացվող գնումների դեպքում առանձին չափաբաժինների անվանումները և ապահովել դրանց հրապարակումը (վերահրապարակումը) Ընկերության պաշտոնական կայքում և Տեղեկագրում:

3. Ընկերության կողմից գնման առարկայի տեխնիկական բնութագիրը կազմվել է պատշաճ մակարդակով:
4. Նախքան մրցույթի հայտարարումը, Ընկերությունը 2 ընկերությունների շրջանակում կատարել է գնային առաջարկների հարցում՝ շուկայի ուսումնասիրություն:
5. Մրցույթին մասնակցել է մեկ մասնակից: Հարկ է նշել, որ գնման գործընթացի արդյունավետ իրականացման նպատակով անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել մասնակիցներ ներգրավելու ուղղությամբ և չսահմանափակվել մրցույթներն Ընկերության պաշտոնական կայքում և Տեղեկագրում հրապարակելով, այլև մասնակցության հրավերներ ուղարկել և տեղեկացնել բոլոր հնարավոր մասնակիցներին: Մրցույթի մասին իրազեկվածության ապահովման նպատակով անհրաժեշտ էնաև գնման հայտարարությունը հրապարակել անգլերեն կամ ռուսերեն լեզուներով:
6. Հաղթող է ճանաչվել հրավերի պահանջները բավարարող մասնակիցը:
7. Պայմանագրով սահմանվել է վճարման ողջամիտ ժամկետ:
8. Պայմանագիրը կատարման ընթացքում է:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ/ԿԱՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹ

Ընկերությանանվանումը	«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ
Գնման անվանումը	«Սևան ՀԷԿ-ի մարդատար վերելակի և հորանի մետաղական կոնստրուկցիայի վերականգնման (նախագծի կատարում) աշխատանքների ձեռքբերում»
Գնման ծածկագիրը	13-ՏՎևՎ-2020-ՄԷԿ
Գնման ձևը	բաց առաջարկների հարցում

ԲՈԼՈՐ ՓՈՒԼԵՐԸ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
1	Համարժեք և համապատասխան գրառումները պահպանվում են գնումների գործընթացի ողջ ընթացքում և մոնիթորինգ իրականացնելու համար բավարար տեղեկատվություն են պարունակում	☑	☐	☐	

ԳՆՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
2	Գնման հայտը հաստատել է կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը կամ վերջինիս կողմից լիազորված անձը	☑	☐	☐	
3	Գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրությունը ճիշտ է կատարվել	☑	☐	☐	

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
4	Մինչև գնումների հրավերների հրապարակելն իրականացվել է համապատասխան շուկայի ուսումնասիրություն (փաստաթղթերը կցված են)	☑	☐	☐	
5	Գնման գործընթացի արդյունավետ իրականացման, ոչ մրցութային եղանակով գնումների ծավալի նվազեցման նպատակով՝ ընկերությունն իր վեբ կայքում և գնումների էլեկտրոնային տեղեկագրում հրապարակելուց բացի դիմե՞լ է արդյոք այլ միջոցների մասնակիցների շրջանակը ընդլայնելու և նրանց միջև մրցակցության խրախուսման համար	☐	☑	☐	

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
6	Ապահովվել են հավասար մրցակցային պայմաններ հնարավոր մասնակիցների համար	☑	☐	☐	
7	Գնման առարկայի բնութագիրը հանգեցնում է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը	☐	☑	☐	
8	Գնումն օբյեկտիվորեն հիմնավորված է և համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է	☑	☐	☐	
9	Մանրամասն ներկայացված են գնման ընթացակարգի փաստաթղթերը	☑	☐	☐	
10	Պատշաճ ձևով ներկայացված են ապրանքների տեխնիկական	☑	☐	☐	

	բնութագրերը, իսկ աշխատանքների կամ ծառայությունների դեպքում՝ ամբողջական նկարագրությունը			
11	Ամբողջությամբ և հստակ նկարագրված են ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարմեկնաբանությունը	☑	☐	☐
12	Գնման առարկայի հատկանիշները պահանջ կամ հղում են պարունակում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանման, արտոնագրի, էսքիզի կամ մոդելի, ծագման երկրի, կոնկրետ աղբյուրի կամ արտադրողի	☐	☑	☐

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
13	Հայտերի գնահատման ընթացակարգը ընթացել է արդար և անկողմնակալ	☑	☐	☐	
14	Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին	☑	☐	☐	
15	Հայտերի գնահատման ժամանակ ապահովվել է հատուցում արժեքի դիմաց սկզբունքը	☑	☐	☐	
16	Պայմանագրի գնի հաշվարկը ներառում է տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը)	☑	☐	☐	

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
17	Սահմանվել է վճարման ողջամիտ ժամկետ	☑	☐	☐	
18	Գնման պայմանագիրը կատարվել է պատշաճ մակարդակով	☐	☐	☑	Պայմանագիրը կատարման ընթացքում է:
19	Գնման առարկայի արժեքը համապատասխան է շուկայական արժեքին	☑	☐	☐	